Հավելված 1

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի
ավագանու 10.02.2026թ. N 16 - Ա որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Աշտարակ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Աշտարակ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:

3.Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:

4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):

5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:

6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:

7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

3) 3-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ, հավաքի վայրը.

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը, հավաքի նպատակը.

6) 6-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

7) 7-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.

8) 8-րդ սյունակում գրառվում են՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.

9) 9-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

10) 10-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

11) 11-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

12) 12-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.

13) 13-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

14) 14-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.

15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

16) 16-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

17) 17-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

18) 18-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

Հավելված 2

Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի
ավագանու 10.02.2026թ. N 16 - Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ _____
(օրը, ամիսը, տարին)

Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ							
N Հ/հ	Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազ-մում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները	Հավաքի տեսակը, հավաքի վայրը	Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը, հավաքի նպատակը	Մասնակիցների սպասվող թիվը	Երթի ուղին և ժամանակացույցը	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8
2							
3							
4							
5							

Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ				
Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը	Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը
9	10	11	12	13

Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ				
Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը	Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվել է դատական կարգով	Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը
14	15	16	17	18

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝_____ _____ էջից:
(թվով) (տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ _____ :
(օրը, ամիսը, տարին)

Համայնքապետարանի աշխատակազմի

քարտուղար՝ _____ _____

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն